

ղանդաւոր գրող և բանաստեղծ Սիմոն Բաբուսկի, որ մի քանի տարի է արդէն ապրում էր թիֆլիսում և աշխատակցում էր «Որդոր» լրագրին և «Ֆալանգա» ծաղրական թերթին, անձնասպանութիւն գործեց, հրացանից իրան սպանելով։ Ասում են որ հանգուցեալը թողեց հետեւալ տօմսակը. «ես ինձ սպանում եմ, ոյժ չունենալով և անպատուութիւն համարելով ուրիշներին սպանելու»։ Փետրվարի 23-ին կատարվեցաւ հանգուցեալի թաղման հանդէսը։

ԳԱՆՁԱԿԻՑ երեցփոխան Ն. Տեր-Ներսէսեանց խնդրում է մեզ տպել մեր լրագրում հետեւալ հրաւերը։ «Հրաւիրում եմ Ս. Յովհաննէս մայր եկեղեցւոյ ծոցով ժողովրդականաց չնոր՝ բերել առաջինայ մայր ամսի 1-ին Գանձակի հոգեւոր կառավարութեան ատենանը, 1880 թիւ եկեղեցական հաշիւատեանը վերադնեւելու համար, որ ներկայացրած եմ յիշեալ կառավարութեանը»։

Գաւառներէց մեզ շատերը դիմում են խնդրելով որ ուղարկենք այլ և այլ թատրոնական պիէսներ։ Կարծում ենք որ աւելի նպատակայարմար կը լինէր գաւառացիներին դիմել այդ տեսակ խնդրներով թիֆլիսի հայոց թատրոնական մասնաժողովին, կամ նրա նախագահ իշխան Ամատունուն։ Իսկ խմբագրութիւնը ոչ միջոց, ոչ էլ ժամանակ ունի լրացնել գաւառացիներին այդ պահանջները։

ԶԱՔԱՌԱՎԻՑ մեզ գրում են որ այդտեղ գրեթէ ամեն օր պատահում են մանր գողութիւններ մասնաժողով տներում, մանաւանդ հրաւերներին, հարսանքներին և խնջոյքներին ժամանակ։

Այս օրերս թիֆլիսի Ներսիսեան դպրոցը տօնեց, որքան մեզ յայտնի է իր գոյութեան յիստուն և չորս տարվայ տարեդարձը։ Տօնախմբութեան մանրամասները մեզ խոստացան հաջորդել։ Միայն մօտաւորապէս լսեցինք որ Ներսիսեան դպրոցը ունեցաւ այս տարի 40 հազար ռուբլ եկամուտ և 52 հազար ռուբլ ծախս, ուրեմն 12 հազար ռուբլ պարտք ունի։ Եւ այդ ռոյժը ինչի համար. այս տարի Ներսիսեան դպրոցից դուրս եկան միայն 6 ուսումնաւարտ աշակերտներ վկայականով։ Ուրեմն սարք մուկն է ծնել։

ՍԻՄՅԵՐՈՓՈՒՅՑ գրում են «Русский Купец» լրագրին որ այդ քաղաքում կայ մի հայ մանկավարժ Բ—ց, որ այդ քաղաքի օրիորդական դիմնադիայի 8-որդ դասատան մէջ մանկավարժութեան դասեր է տալիս։ Ուսու լրագրի

են ներկայացնում, բայց դարձեալ հիացնում ու ապշեցնում են տեսող դիտող աչքն ու միտքը։ Ով լքեալ և ամայացեալ թաղուհի, արիւնով ողորկած պատուածանից կտորների վրա, որոնք ձորձորված մարմնիդ տակաւին կպած կալին, տեսալ բազմաթիւ ու ռուբլների գիշախանձութեամբ ելելը, իւրաքանչիւրը ճանկել ու ճանկում էր դարձեալ մի պարտաւ ու փախցնում։ Եւ, այդ աղէկաւոր ու միւս կողմէն ճիւղաղան տեսարանի առջև, մտածել որ միայն երկու հատ արտահանք ունէի միայն տկար գէնը, մինչդեռ պէտք էր այնտեղ երկրներն հրացանը։ Բայց գիշերը բազմաթիւ արտօնութիւն ունին երկնքէն, իսկ ես որքա՞ն, ով մայր, իրաւունք անգամ չունէի ձայնով լարու, զի բողբոջ և անընտանութիւն է համարվում այդ։

Ժամանակն ստիպում էր. վեց ժամ էինք գրել հասնելու համար. երեք կամ չորս ժամ ու չինչ էր այդ ողբոց քաղաքի սպաւոր մեծութիւնը տեսնելու համար. մնում էր մեզ ապշանք նայել և անցնել։ Արագուով, թատուն չնոյժ և երես մինչ ի գետին խոնարհ՝ ելայ միջնաբերդը—բարձր բլուր, աւերակներով՝ որպէս դիմաքներով ծածկուած. պարիսպ, սպարաւը, մատուռ՝ իրար թաւալուած, իրար խառնուած, իրենց մոխիրների մէջ իրար գրկած. և իբրեւ մի դառն հեցնութիւն, մի յուսահատ մի ճիւղաղան ծաղր, տեսնում են պարսպի մի փէշ՝ ժամանակի ու վայրագութեան ճանկերէն կեղծուած ու կեղեքուած՝ տակաւին մնում է այստեղ կանգուն. այնտեղ մի քառակուսի շինութիւն՝ կիսափուլ մերկ պատերով խայտառակուած։ Նշիլ վրա, ձախիլ վրա՝ տեսնում են բաներ, որոնք իբրեւ որ և է բան՝ ճանաչվելու աղօտ նշաններն անգամ կորուսել են։ Այդ բարձ-

րդթակեցը բերում է քաղաքի հայ մանկավարժ տետրակները։ Մանկավարժի ուսմանը ներկայումս անմասնութիւն են, նրանցից անհնարին է մի բան հասկանալ և խեղճ օրիորդները, չը կարողանալով հասկանալ մանկավարժի երեւելի մտքերը, ստիպված են անգիր սովորել։ Նրա ուսմանը ներքին Պ. Բ. բնաւ չը գիտէ ուսմանը, բացի սորանից նա ջերմ պաշտպան է մի շատ հնացած մանկավարժական միջոցի, այն է ծեծի և առհասարակ մարմնական պատիժների։ Երբ որ մի աշակերտուհի յանդգնեց նկատել որ մանկավարժին որ երեւելի Սպէնսեր ընդդէմ է մարմնական պատիժների, պ. Բ. արհամարհանքով պատասխանեց որ դարմանում է թէ՛ ռուսները իրանց լեզուով թարգմանում են Սպէնսերի գրութիւնները պէս յի մարտութիւնն էր և որ գտնվում են մարդիկ, որոնք այդ յիմարութիւնները կարդում են։ Եւ այդ տեսակ ապուշ պէտք է պատրաստի վարժապետացու օրիորդները։

Շարժք օր, փետրվարի 21-ին, հայոց թատրոնական կոմիտեալը թիֆլիսի ժողովարանում տուեց գրականական և երաժշտական երիւկոյ յօգուտ հայ թատրոնական մարդ գումարի։ Երեկոյին մասնակցում էին բացի հայ գերասանուհիներից և գերասաններից, օր. Վ. Խոսրոյեան, պ. պ. Ն. Խոսրոյեան, Ե. Ղորանեան, Գ. Նախապետեան և Գ. Չմէկեանց։ Ժողովարանի դահլիճը լի էր բազմութեամբ և մէկ դատարկ տեղ չը կար։ Որ. Խոսրոյեանը, Ե. Ղորանեանը առնեցին պիանոի վրա, իսկ Նախապետեանը ջութակի վրա։ Երեւն էր բուն ծափահարութիւններով վարձատրվեցան հասարակութեանց իրանց գեղեցիկ անկող. համար։ Որ. Սիրանուշ, պ. պ. Ն. Խոսրոյեանը և Սուքիասեանը երգեցին. հասարակութիւնը մի քանի անգամ կրկնել տուեց դրանց մի և նոյն երգերը։ Իսկ օր. Վ. Գարաբաշեան և պ. Աղաման Կարապետեան զանազան բանաստեղծութիւններ, որոնք լաւ տեղ պաւորութիւն գործեցին հասարակութեան վրա։ Գրականական երեկոյից յետոյ ծափահարութիւններով շնորհակալութիւն յայտնեցին հայ թատրոնական կոմիտեալի նախագահ իշխան Ամատունուն, որից յետոյ եղաւ ընդհանուր պար։ Ասում են, որ այդ երեկոյի մուտքը ևս էլ է մօտաւորապէս 1,500 ռուբլ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ
„Neue Freie Presse“ լրագրի փարիզի

րութիւնէն, բոլոր քաղաքը շուրջանակի աչքիդ առջև է. մի անգին մարդաստան հողումն իր և քարակարկանների տակ թաղուած. աչքը հեռուն եւ ձգում՝ հսկայ լեռներ ու լեռներ մօտ եւ բերում՝ սարեր ու բլուրներ, իրենց գագաթի ու կողմերի վրա՝ ստուերի մէջ՝ մատուռներ ու վանքեր կրկնով. չորսը՝ քաղաքն երեք կողմից պաշարուած է ձորերով, արեւով ու անպաճաճներով. չորրորդում, հսկայ պարիսպները կանգնած են հիւսիսի դէմ և իրենց երկայն ու հզօր բազուկներով նաև բարձրութեանց վրա ու խորոց մէջ գրկում են արեւը ու արեւմուտը։ Գու միայն, ով դարհուրելի ժայռ՝ արժիւնքին և եթ մատչելի, դու, հեթանոսական ու բնիկ Անի, որ մի խոր ու լայն ձորով բաժանուած ես միւսեղ, հեռաւոր օդի մէջ քոյղուած՝ նստած ես միակ տաճարովդ. դու ես երեւում աչքիս և տաճարդ. և տաճարդ՝ խորհրդամած՝ միգամած. հեթանոսութիւնն այնտեղ ոսկիմայր Անահայ խորհրդուն և կատարել տուել. քրիստոնէութիւնն այնտեղ սաղմոս է նուազել, և այսուուր շինականն այնտեղ արքայադստեր ապարանքն է տեսնում. արքայադուստրը գաղտնի ճանապարհով արքունիքէն այնտեղ էր գնում։ Խորհրդաւորութեան համար անընդունելի վեր ես ցցուել, ով ժայռ. Ախուրեան իւր փրփուրներով՝ ոտերիդ տակ զննում ու խորիմալ է լիզում. հողի հետ միայն յետուստ փէշերդ են հարդրվում, իսկ ինքը բարձրաբերձ ու համեմատ մարմնովդ օդի մէջ ես յաւերժացած և եթերային մի քօղ պատած ունի վայելչազդ հասակդ։ Արեւոք մի օր պատմելու ես ունեցած ես տեսած գաղտնիքներդ, ով ժայռ։

Այցելու, այդ գերեզմանաց քաղաքին մէջ, այդ բլրի բարձրութեան վրա կեցած պահուդ, մեռեալ

թղթակիցը հետեւեալ կերպով է նկարագրում իր խօսակցութիւնը Գամբետտայի հետ։ Գամբետտան չափազանց տարօրինակ անձնուորութիւն է։ Նրան կախարհական ոյժ են համարում։ Ես բարեկամական յարաբերութիւններ ունէի այդ երեւելի մարդու հետ, բայց մենք շատ քիչ ենք տեսնվել այն ժամանակից, որ նա բնակվեց Բուրբոնեան պալատի մէջ։ Նա շատ անմատչելի է դարձել, թէպէտ նրա ընդունարանը միշտ այցելուններով լիքն է լինում և նրա քարտուղարները հազիւ են կարողանում պատահանել ստացված նամակներին։ Որովհետեւ վերջին ժամանակներում թէ՛ Ֆրանսիայի և թէ՛ Եւրոպայի մէջ սկսեցին Գամբետտայի մասին գանազան հրաշքներ պատմել, եւ յաղթեցին իմ զգուսնքը դէպի ընդունարանները և վճռեցին տեսնվել այն տարօրինակ մարդու հետ, որի գուները երբեք չեն փակվել իմ առաջ։ Ես ուղեորվեցի Բուրբոնեան պալատը։ Որքան զանազանութիւն նկատեցի ես այն ժամանակից, երբ Ֆրանսիայի նախկին ղեկավարը, հասարակ պատգամաւոր դառնալով, ապրում էր Մօնտան փողոցի վրա փոքրիկ և համեստ կահաւորված սենեակի մէջ և միայն մի ծառայ էր պահում։ Այժմ նրա տան մուտքի մօտ պատուաւոր պահապաններ են կանգնած։ Ահա ինչ նախասենեակի մէջ այցելուն պատահում է մի խումբ ծառաների պողպատեայ շղթաներով և սրերով, որոնք նրան տանում են ընդունարանը և նրա գալուստը յայտնում են իրանց պարտին։ Ընդունարանը դարձաւ իմ հայրենիքի մարմնաւորութիւն։ Ինձ անցկացրին շքեղ դահլիճներով մինչև նրա գրասենեակը, որտեղ գրասեղանի մօտ նստած է Գամբետտա։ Նրա գէմբը նոյնպիսի փոխիկ է, որքան և ապրելու եղանակը։ Նրա ձայնը, խօսակցութիւնը նոյնն են մնացել, բայց երիտասարդական թարմութիւնը այլ ևս չը կայ։ Նրա վաղեմի սև մազերը արծաթի նման սպիտակել են։ Եւրոպայի քաղաքական մարդիկ ծերանում են այն հասակի մէջ, երբ անդլիական պետական մարդկանց գործունէութիւնը նոր է սկսվում։ Տեսնելով ինձ

լուծեան ծոցում, մի անյայտ երկիւղի գաւազանի տակ, ամեն բան ամեն կողմից իրար վրա վազում ժողովուրդ է և սաստիկ բուրբուռած երեւակայութեանը վրա ընկնում։ Արեւ լեռների ետև հանգչելուն մօտեցել է. սարերի, ժայռերի ու բլուրի ցցուն բաների ոտուորները երկայնուովում ու ցնորական կերպարանք են առնում. դու դարձեալ նայում ես չորսը. ով դիւթութիւն. թագապալի ուրուականներ պալատների քանդակներէն ելնում ու մտնում են. եկեղեցիների ու մատուռների շուրջ վեղարաւորները թափօր են գործում. պարիսպների վրա և փլուզված աշտարակների մէջ զինուորներն յետ ու յետով վազում, զանազան մարտական շարժումներ են անում. փոսերի մէջ քարակոյտերի վրա, սինների տակ անթիւ մարդիկ, մանր ու խոշոր, այստեղ պար են գալիս, այնտեղ սուգ անում, մի տեղ աղօթում, միւս տեղ հակառակում, այն կողմ խնջոյք և փողով ու թմրիկ ձայնը, այն կողմ թշուառութեան հեծեմը։ Ուրուականների մի ամբողջ աշխարհ էլ կենալ կարող չես, քաշութեանդ վեր բան է, մանաւանդ երբ մոտում են թէ՛ այն հաղորդ ու մէկ խորհրդին ու խոսքին։ Երբեք չես յանկարծ դուրս պրծնել մի աւաղակի վրա թագաւորներէն վերջը, ինքն է բնաւ կուտիւն դրել այն աւերակների մէջ, և ինքն է հարկ կամ կեսնք պահանջող այցելուններէն և շատ անգամ երկուսը միասին։

Երբ ելանք քաղաքի դռներէն, արեն ամբողջում էր իւր ճառագայթները. փոքր ու չէինք մնացել։ Մինչ մեր կառքը ճեպում էր դէպի խօսակցութեան, և մենք երեսներս տուր դարձուցած աչքով տակաւին անբաժան էինք աւերակներէն, յանկարծ—ձախորդ հանդիպութիւն—պիղծ բուրգերիցմանական կանչիւնը՝ ականջս ընկաւ։

Գամբետտա մեկնեց իր ձեռքերը և տաց, թէ մենք վաղուց չէինք տեսնվել։ «Կուք միշտ զբաղված էք», պատասխանեցի ես։ Գամբետտա թղթակցին ասել է մօտաւորապէս հետեւեալը։ «Իմ պաշտօնս այնքան ծանր է, որ ես հազիւ եմ կարողանում տեղիցս շարժվել, թէպէտ շարժողութիւնը ինձ համար անհրաժեշտ է։ Իմ քաղաքականութիւնը նոյնն է, ինչ որ առաջ, շատ աննշան փոփոխութեամբ։ Չարմանում եմ, թէ իմ մասին ինչի են գանազան յիմարութիւնը տարածում այն ժամանակից, որ Շերբուրի մէջ արտասանեցի յայտնի ճառը։ Կա ընտրողական մի խորամանկութիւն է։ Տեսնելով, որ հանրապետութեան գործերը շատ լաւ են գնում, որ անկարելի է նրա ֆինանսների և վարչութեան գրութեան վրա յարձակվել, ասում են, թէ Գամբետտա պատերազմ է ցանկանում։ Որովհետեւ 1881 թ. այդ խորամանկութիւնը աշողկեցաւ, հանրապետութեան թշնամիները կարծում են, որ նոյնը և այժմ կարող է պատահել. բայց նրանք սխալվում են։ Ես ձեզ շատ անգամ ասել եմ, որ երբ Ֆրանսիայի վերքերը կը բուժվեն, երբ նա իր նշանակութիւնը Եւրոպայի մէջ նորից կը ստանայ, այն ժամանակ կը հասնի վրէժխնդրութեան բուռն պէն, բայց առանց պատերազմի, առանց արիւնհեղութեան։ Գրեթէ նոյն նշանակութիւն ունէր Շերբուրի մէջ արտասանած իմ ճառը, թէպէտ ես արտաքին քաղաքականութեամբ չեմ պարապում։ „Republique Francaise“ լրագիրը ճշմարիտ է ինձ հետ մօտ յարաբերութիւն ունի, բայց նրա խումբագրութիւնը ինձանից կատարկապէս անկախ է և գրում է այն, ինչ որ կամենում է։ Շատերը չէին կարողանում հասկանալ, թէ ես ինչպէս կարող էի յարձակվել պատգամաւորների ժողովի հաւանութիւնը ստացած քաղաքականութեան վրա, հետեւապէս այդ ժողովի և կառավարութեան վրա, բայց ես չեմ էլ մտածել յարձակվել կառավարութեան վրա։ Հանրապետութիւնը այժմ մեանից լաւ միջնորդութիւն դուռ չէ ունեցել և ես ցանկանում եմ, որ այդ միջնորդութիւնը պահպանվի և ապագայ ըն-

հետ վեր վաղեցին մտքիս մէջ բանաստեղծի տխուր տողերը։

Կորոցներ եմ թագաւորներ, խորհրդ եմ գլխուս քօռ բըւեր. Որ միշտ կերպեն—Անին անցաւ, Անին անտեղ աւերակեցաւ։

Ամփոփուեցալ կառքի անկիւնում, գլուխս կուրծքիս վրա կախ և աչքերս փակ։ Ով քաղաք, շատ էի կարողացել պատմութիւններդ, թէ ուրախ թէ տխուր, բայց երբ տեսայ քեզ, նոր միայն յատկապէս ուսայ թէ ինչ էիք և ինչ ես։ Անի, ասել է մի աղբ, մի դօրութիւն, մի թագաւորութիւն, մի ճոխութիւն, մի չքող ճարտարապետութիւն, մի գուարթ բանաստեղծութիւն. և Անի, ասել է մի անազոնութիւն, մի անկուսմ, մի կործանում, մի ամայութիւն, մի քաղաքաւալ պերճութիւն, մի տխուր խորհրդածութիւն. Բայց քեզ ճանաչելու, ով քաղաք, պէտք է կարեկցութիւն ծնանի քեզ համար. եթէ քու տեղիդ թեւ լաղրելու չէ որբերիդ, որ նոքա իրենց բուրգ պէս հեծեմը թողնեն, որի համար բանաստեղծը իրաւամբ կշտամբում է նոյցալ, և զգալով իրենց կոչումն ու պարտքը՝ ժողովուրդին վերքերդ պատելու, քեզ մխիթարելու ու քեզնով մխիթարվելու, էլ ուր ապա միտաւոր կուրծքը բաց ես արած նոյցա առջև։

Արդէն բաւական հեռացել և իջնում էինք Ախուրեանի ձորակը և մուկն ընկնում էր և Անի ծածկուել էր մեր աչքէն։

Խմբագիր — Հրատարակող ԳՐԷԳՐ ԼԵՃՐՈՒՆԻ

